

տրամաբանութիւնը, համոզումին հուրքովը վարակիչ: Թանճրապաշտ ու յամառ, գիտցածին վրայ ամրա-
խարխախ, ճկելու անընդունակ՝ աչազուրկ դաստիարակը
մտքիս մէջ շինեց իր տեղը, դեռ այդ օրերէն գիծեր որա-
կող վերադիրներուն համակեդրոն վկայութեամբը: Ա՛յն-
քան՝ որ մօտ քառորդ դար յետոյ, փարաւոններու երկրին
մէջ, իմ կողմէ հանդիպում մը Մաթիկի ներկայացուցած
խտէրոկին, պիտի վաւերացնէր գլխաւոր գիծերը անոր
ասումին: Ես գտայ դաստիարակը նոյն ծաղկահար կոշ-
տութեան, բայց այլուրային թռիչքի մը մէջ, ինքզինք
վստահած տփռոյն տղու մը թեւին: Նոյն փաստակուռ
մարդն էր, մեր ամբողջ պատմութիւնը զետեղած իր
գանկին յարկերուն, բայց անկէ լաւագոյն մը յատկացու-
ցած ժամանակակից մասին: Յիշեց Մաթիկը, անոր տհաս
գաղափարները ու վերացաւ մեր ժամանակը դատելու
նոյն խանդով, որ ապշահար կ'ընէր առաջին մօտեցողը:
Հիմա՝ անիկա հեղինակ ալ էր, թելադրելով, մոլսաներու
բարբառով, իր կենդանի պատմութիւնը: Չընդունեց իմ
առարկութիւնները, որոնք ուղղուած էին ոճին, պատմե-
լու ձեւին, տաղաչափութեան անտեղութեան եւ խոշոր
չափով մը հռետորութեան, որոնք կը խեղդէին պատմա-
կան մերկ իրողութիւնը: Չընդունեց անկարելիութիւնը
Միջերկրականի նկարագրութեան մը, քանի որ բախտը
կ'արգիլէր զինքը այդ երջանկութենէն: Աչքիս առջեւն է
իր թերահաւատ տխրութիւնը, «կապոյտ ալիքներէն» եւ
«սպիտակ փրփուրներէն» հրաժարելու հարկին դէմ, զոր
չէր հասկնար ու զիս կը ջանար հարուածել իմ համբաւին
խստութեամբը: Յետոյ բաժնուեցանք: Մահը փակեց այդ
ողբերգութիւնն ալ անօթի մեռնող դաստիարակին: Չեմ
տեսած իր հայրենակիցներուն ջանքովը հրատարակուած
այդ գործը: Անշուշտ, հաւատարիմ իր սկզբունքներուն՝
անիկա քիչ բան ըլլալու է փոխած իր մատեանէն, եթէ
երբեք բան մը փոխած ալ է:

... Ընկեր Մաթիկը Վասպուրականի մէջ գործ ունե-
ցաւ ուրիշ շատերու հետ, տարեկիցներ ասոնք, մեծ